ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, ԱՐՄԱՎԻՐ, ՓԱՐԱՔԱՐ, ՆԱԻՐԻ Փ., 42, 1149,
Հեռ. 6-00-42, 060-53-00-42

N 1714

12 հունիսի 2024թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խուդաթյան,

Ի կատարումն ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի, կից Ձեզ է ուղարկվում ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կողմից աճուրդային կարգով օտարվող հողամասի վերաբերյալ հայտարարությունը՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում հրապարակելու նպատակով:

Առդիր՝ 1 էջ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

իրավաբանական բաժնի պետ՝ Մ. Կոստանյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է դասական աճուրդ:

ԼՈՏ 1- ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ 04-074-0123-0244 կադաստրային ծածկագրով, 0.3465 հա մակերեսով վարելահող գործառնական նշանակության հողամաս: Լոտ-ի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ 12-24: Աճուրդի մեկնարկային գին՝ 5000000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 50 տոկոսը:

Քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Աճուրդը կայանալու է 2024 թվականի հունիսի 19-ին ժամը 11:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2024 թվականի հունիսի 14-ը, ժամը 18:00-ն:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ նրկայացնելու համար դիմել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան /ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքարի համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 1-ին հարկ, իրավաբանական բաժին/: Հեռ.՝ 023-16-00-42:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ